

ՔՐԻՍՏԻՆԵ ՊԱՊԻԿՅԱՆ

ՌԱՖԻԿ ԳԱՐԲԵԼՅԱՆ

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՈՒ
«ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ» ԷԶԵՐՈՒՄ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.259

ԱՄՓՈՓՈՒՄ

ԺԷ դ. ականավոր պատմագիր Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւն»-ը բաղկացած է երեք մասից, որը ընդգրկում է հայոց պատմությունը՝ սկսած Արշակունիների թագավորությունից, Սասանյանների դինաստիայի հաստատումից մինչև 1699 թվականը: Պատմագիրը ծնվել է Կոտայք գավառի Քանաքեռ գյուղում 1627 թ. և իր հետագա ստեղծագործական կյանքն ու գործունեությունը ծավալել է Արագածոտն գավառում՝ Հովհաննավանքում (մահացել է Հովհաննավանքում 1699 թ.): Այս է պատճառը, որ նա իր աշխատանքի մեծագույն մասը նվիրել է այս շրջանների ուսումնասիրությանը: Քանաքեռցու «Պատմագրութիւն» աշխատության մեջ գրառված նյութերը, որոնք վերաբերում են ուշ միջնադարի Հայաստանի տնտեսական կյանքի հիմնական ճյուղերին: Մասնավորապես նա անդրադարձել է դաշտամշակությանը և գյուղատնտեսության մյուս ենթաճյուղերին (երկրագործություն, պտղաբուծություն, այգեգործություն): Ուշագրավ են նրա տեղեկությունները նշված բնագավառների հետ կապված արտադրական կառույցների վերաբերյալ: Քանաքեռցին մանրամասն տեղեկություններ է հաղորդում երկրագործության մեջ կիրառվող աշխատանքային գործիքների մասին: Նրա տվյալները կարևոր պատմական-ազգագրական սկզբնաղբյուր են: Պատմիչը, իր աշխատանքը շարադրելիս, հիմք է ընդունել ոչ միայն վիմագիր արձանագրությունները, մատենագիր գրականությունը, իբրև բանահավաք, ականատես-վկայի ճշգրտությամբ հստակ ու

արժանահավատ տեղեկություններ է հաղորդում իր ժամանակաշրջանի պատմության, սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ: Քանաքեռցու «Պատմագրութիւն» երկի առանցքը հայ աշխատավոր, կոռի աշխատանքի տակ կքած հայ գյուղացին է, ով գտնվելով պարսկական տիրապետության տակ՝ ենթարկվում էր ընչաքաղց խաների կամայականություններին, ապօրինի հարստահարումներին ու ծանր հարկային քաղաքականությանը: Պատմագիրը անդրադարձել է նաև պարսիկ խաների կողմից տնտեսության զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացմանը, որոնք հետապնդում էին քաղաքական և անձնական շահեր: Պարսիկ խաները հարստություն ձեռք բերելու նկատառումներով Կոտայքի և Արագածոտնի տարածքներում անց են կացնում ջրանցքներ ոռոգման համակարգը բարելավելու համար, ինչը կարող էր նպաստել իրենց հարստացմանը:

Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւն»-ը կարևոր սկզբնաղբյուր է իր ապրած ժամանակաշրջանի Հայաստանի պատմության, քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության տեսանկյունից: Նրանում զետեղված ազգագրական նյութերը հիմք են հանդիսանում ուշ միջնադարի հայ ժողովրդի տնտեսական կյանքի նկարագրի վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու համար՝ հնարավորություն տալով հետագա նոր ուսումնասիրությունների իրականացմանը: Եթե վաղ և զարգացած միջնադարի պատմիչների հաղորդած տվյալները խիստ կարևոր են Հայաստանի աշխարհիկ և հոգևոր դեմքերի կյանքի և գործունեության զանազան խնդիրները հասկանալու և պարզաբանելու համար, ապա ԺԷ դ. պատմիչների երկերի հիմնական ատաղձը շարքային ժողովուրդն է, որով էլ այն առանձնանում է վաղ շրջանի պատմիչների երկերից: Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւն»-ը եզակի սկզբնաղբյուր է հասարակ մարդու կյանքն ու կենցաղը լուսաբանելու համար: Նրա հերոսը հայ շինականն է, երկրագործը, արհեստավորը: Այս առումով ուշ միջնադարի պատմիչներ Զաքարիա Քանաքեռցին, Առաքել Դավրիժեցին, Զաքարիա Ագուլեցին, Գրիգոր Դարանաղցին գալիս են նպաստելու շարքային գյուղացու կյանքի

ամենատարբեր ոլորտների լուսաբանմանը: Թեման արդիական և կարևոր է այս առումով:

Քանալի բառեր և արտահայտություններ. Զաքարիա Քանաքեռցի, պատմագրություն, սկզբնաղբյուր, ուշ միջնադար, երկրագործություն, այգեգործություն, ոռոգման համակարգ, ջրանցքաշինություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԺԷ դ. ականավոր պատմագիր Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւն»-ը բաղկացած է երեք մասից: Այն ընդգրկում է հայոց պատմությունը՝ սկսած Արշակունիների թագավորությունից մինչև 1699թ.: Պատմագիրը ծնվել է Կոտայք գավառի Քանաքեռ գյուղում 1627թ.: Իր հետագա ստեղծագործական կյանքն ու գործունեությունը ծավալել է Արագածոտն գավառի Հովհաննավանքում, որտեղ և մահացել է 1699 թ.: Նրա պատմության առաջին երկու հատորները հիմնականում նվիրված են Կոտայք և Արագածոտն գավառներին: Երրորդ հատորը ընդգրկում է Հովհաննավանքի արձանագրությունները իր ճշգրիտ վերլուծությամբ: Քանաքեռցու «Պատմագրութիւն»-ը կարևոր պատմագագադրական սկզբնաղբյուր է: Իր աշխատանքը շարադրելիս պատմիչը՝ իբրև սկզբնաղբյուր, օգտագործել է ոչ միայն վիմագիր արձանագրությունները և մատենագրությունը, այլև հանդես է եկել իբրև բանահավաք և ականատես-վկա: Նրա երկը հստակ և արժանահավատ տեղեկություններ է պարունակում ժամանակաշրջանի պատմության, հասարակական ու տնտեսական կյանքի մասին: «Պատմագրութիւն» մեջ հիշատակվում են նաև պարսից Շահ Աբասի կողմից Երևանը գրավելուց հետո խաների իրականացված տնտեսական բարեփոխումներն ու տնտեսության զարգացմանն ուղղված աշխատանքները:

Ներկա հոդվածով անդրադարձ է արվում Քանաքեռցու «Պատմագրության» մեջ տեղ գտած այն նյութերին, որոնք նկարագրում են հայ ժողովրդի տնտեսական կյանքը, գյուղատնտեսությունը՝ մասնավորապես դաշտավարությունը, այգեգործությունը, բանջարաբուծությունը, խաղողագործությունը՝ որպես մարդկանց կենսապահովման հիմնական միջոց: Փորձ է արվում համադրել նրա հայտնած տվյալները միջնադարին վերաբերող այլ տեղեկությունների հետ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Տնտեսության նկարագիրը Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրության» էջերում միջնադարյան Հայաստանի մշակույթի համատեքստում» հոդվածը գրվել է պատմավերլուծական և աղբյուրագիտական մեթոդներով: Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրություն»-ը հիմք է հանդիսացել որպես սկզբնաղբյուր: Կիրառվել են նաև պատմահամեմատական և նկարագրական մեթոդներ՝ տնտեսական կյանքի վերաբերյալ տեղեկությունները համակարգելու և դրանք միջնադարյան Հայաստանի երկրագործական մշակույթի համատեքստում մեկնաբանելու նպատակով:

ՔՆՆԱԼԿՈՒՄ

Երկրագործություն

Միջնադարյան Հայաստանի տնտեսության մեջ գերիշխող են եղել երկրագործության տարբեր ճյուղերը՝ այգեգործությունը, դաշտավարությունը և քանջարամշակությունը:

Այգեգործությունը և տնկի աճեցնելը համարվել է պատվի գործ: Այս առնչությամբ Մխիթար Գոշը (ԺԲ դ.) գրում է այն չարագործ մարդկանց մասին, որոնք հատում են տնկիները. «Շարժեալ ոք սատանայական ցասմամբ հատանիցե գտունկ ուրուք. ևս ճշտիւ գայցե դատաստան լիցի դնել գտունկն հատողին ևս իւրոցն՝ զամսն, ցորքան անպտուղ լիցեն տունկն, տուժիլ նովին չափով, ապա թե իւր չիցե՝ ըստ զնոյն լիցի» (Բեգլարյան Հ., 2014):

Ներսես Շնորհալին (1102-1173թթ.) գրում է, թե հայերն ինչպիսի հոգատարությամբ ու սիրով էին մշակում այգիները, խնամում ծառերը. «Երբ հանդիպում են միմյանց այգիների տերերը, այլև այլ վայրերի կրոնավորները, ողջունից հետո ո՛չ հոգիների ողջությունից են հարցնում և հիվանդությունների ախտերից և ո՛չ դիվական պատերազմներից ու խաղաղությունից, այլ թե այս տարի, ով եղբայր, ինչպես է քո տնկիների պտղաբերությունը, առավել է, թե նվազ, և նա թախծալի սրտով պատասխանում է, ինչ ասեմ (ասում է) պատահած աղետների մասին, քանի որ մի մասը ճիճուներից վնասվեց, մի մասի ծաղիկները թափվեցին և մյուսներն էլ, արևկեզ լինելով, ողկույզի վրա չորացան և կեսն էլ նեխությամբ

ապականվեց: Եվ ընկերը, թելադիր լինելով նրան, խրատ է տալիս՝ մի մասը պատվաստել այն տնկիներից, որոնք պտղակորույս են լինում և մյուսները զանազան փորձված հրաշքներով բուժել պատահած հիվանդություններից» (**Առաքելյան Բ., 1964**): Այս վկայություններից հասկանալի է դառնում, որ մշակները այգին մշակելու համար պետք է կտրեին հին ծառերը, տնկեին նորերը և խնամեին նորատունկ ծառերը մինչև նրանց պտղառատ դառնալը:

Միջնադարյան Հայաստանում այգիներ են տնկվել ոչ միայն վանքերի և անհատ մարդկանց համար, այլև բարեգործական նպատակներով՝ աղքատների և կարոտյալների կարիքները բավարարելու մտքով: Այս առումով հետաքրքիր վկայություններ են պահպանվել Ստ. Օրբելյանի մոտ: Գնդեվանքի կառուցմանը վերաբերող նյութերում նա գրում է, որ այն կառուցող սյունյաց Սոփիա իշխանուհին վանքին է նվիրում երկու գյուղ. «Իսկ ձորը վերից վար, մինչև Գոլոշտին քարը, հրամայեց տնկել այգիներ անուշաճաշակ պտղալից ծառերով և այգի տնկել ի վայելումն սուրբ եղբայրության և ամենայն կարոտյալների» (**Բեգլարյան Հ., 2014**): Մեկ այլ օրինակում խոսելով սյունյաց Հակոբ եպիսկոպոսի կատարած գործերի մասին՝ Օրբելյանը գրում է, որ նա տնկել է բազմաթիվ այգիներ և այդ վայրերը զարդարել թանձրախիտ ծառերով ու որթով՝ ի վայելումն եղբայրության, ինչպես նաև բոլոր աղքատների ու կարիքավորների (**Բեգլարյան Հ., 2014**): Վերոնշյալ վկայությունները խոսում են այն մասին, որ միջնադարյան Հայաստանում այգեգործությունն ունեցել է նաև հասարակական հարաբերությունների կարգավորման և բնակչության շրջանում անապահով խավերի կենսական պահանջների ապահովման գործառույթ:

Հայկական լեռնաշխարհը, շնորհիվ իր կլիմայական բարենպաստ պայմանների, նպաստավոր է եղել այգեգործությամբ զբաղվելու համար: Քանաքեռցին գրում է, որ Պարսից Շահ Աբասը Երևանը գրավելուց հետո այստեղ իշխան է կարգում Ամիրգունա խանին, ով Շահից հրաման է ստանում այգիներ տնկելու և շինարարությամբ զբաղվելու: Նա պատմության մեջ հայտնի է որպես հայասեր, շինարար, երկրի տնտեսության զարգացմանն ուղղված քայլեր իրականացնող իշխան: Նա սկսում է կառուցել ապարանքներ, այգիներ,

պարտեզներ և ջրանցքներ: Թեթևացնում է ռամիկների հարկերը, բայց քանի որ շինարարություն էր անում, շատացնում է «գոռիսրան», այսինքն՝ «կոռը» (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1969): Թեև կոռը շատ էր, բայց խանը գրասիրտ էր և հաց էր բաժանում կոռի մշակներին: Քանաքեռցին գրում է. «բազում հաց եփեալ, և բառնայր ձիոց, և առեալ գնայր, շրջէր յանդաստանսն, և բաժանէր զհաց՝ որք վաստակէին յանդս» (Քանաքեռցի Ջ., հ.1, 1870):

Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենի վկայությամբ Երևանի խանությունը ամբողջ պարսից պետության մեջ համարվել է ամենաեկամտաբեր և ամենանշանավոր կուսակալությունը (Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., 1902): Նա գրում է, որ Երևանի խանությունը տարեկան «բերում է երեսուներկու հազար թուման» (Աճառեան Հ., 1926) եկամուտ, որը կազմում է հինգ հարյուր հազար էփյու (Հայրապետյան Ա., 2011)*, չհաշված հարկադիր տուրքերը, նվերները և կոմսակի ճանապարհներով ձեռք բերված հարստությունները, որոնք բերում են ևս երկու հազար էփյու» (Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., 1902) :

Քանաքեռցին գրում է, որ ոմն մահմեդական այգի է տնկում և ծնունդով Կոտայք գավառից Սարգսին նշանակում է իր նորատունկ այգիների պահապան: Սարգիսը որթատունկերի մեջ ցանում է սեխ, վարունգ, ձմերուկ և կանաչեղեն (Քանաքեռցի Ջ., հ.1, 1870): Երևանի վերջին Սարդար Հուսեին խանը, ով պատմության մեջ հիշատակվում է որպես շինարար և հայասեր, իր եկամուտների ավելացման համար Երևանում շատացնում է այգիների թիվը, ավելացնում է խաղողի որթի և ծառապտղի տեսակները: Նա արքունի այգիների համար Հնդկաստանից ու Պարսկաստանից բերում է մրգերի լավագույն տեսակներ (Շահագիզ Ե., 2003):

* Թուման՝ բիր, տասը հազար: Ատրպատականի թուրքական արտասանությամբ tümen «դրամի անուն, որ արժէ 10.000 դինար, մօտ հինգ ֆրանկ»:

* Էփյու [<экио < ֆր. e'cu], 1 (ֆին.): Ֆրանսիական ոսկե կամ արծաթե հին դրամ ԺԳ-ԺԸ դդ.: Եվրոպական արտարժույթի անվանում, որը գործարկվել է 1979 թ.:

Սեխի, ձմերուկի ամենաընտիր տեսականին աճել է Արարատյան հովտում: Այստեղ մշակում էին հիմնականում երկու տեսակի ձմերուկ՝ պահունի, որը հաստակեղն էր և դիմանում էր մինչև ձմեռ, և սովորական՝ բարակ մաշկով և գնդաձև (**Բդոյան Վ., 1972**): Արարատյան գավառից գատ, ձմերուկի մշակությամբ զբաղվել են նաև Երևանի նահանգի ցածրադիր գավառներում, Երզնկայում, Խարբերդում, Էրզրումում, Տիգրանակերտում և այլուր: Առավելապես հայտնի է եղել Տիգրանակերտի քաղաք ու համով սեխը, և իր մեծությամբ ու համով աչքի ընկնող ձմերուկը: Նույնիսկ ասում են, որ եթե 8-10 տարեկան երեխան նստի այդ ձմերուկի վրա, ոտքերը գետնին չեն հասնի: Տիգրանակերտի ձմերուկի քաշը երբեմն հասել է 60-96 հոխայի* (**Մալխասեանց Ս., 1944; Բդոյան Վ., 1972**):

Ֆրանսիացի ճանապարհորդ և բուսաբան Ժոզեֆ Պիթոն դը Տուրնեֆորը, ԺԷ դարում այցելելով Հայաստան, երեք Եկեղեցիների քաղաք Էջմիածին, անդրադառնում է Հայաստանի հարուստ բուսականությանը, նա գրում է. «Ինչ վերաբերում է Երեք Եկեղեցիների տեղանքին, ապա այն հիասքանչ է, ես չգիտեմ դրա նման երկրորդը, որը ավելի լավ պատկերացում կտաք Երկրային Դրախտի մասին...: Ես կասկածում եմ, որ երկրագնդի վրա կա մեկ այլ երկիր, որտեղից միանգամից կարելի է հավաքել այդքան սննդամթերք (ձավարեղեն, բրինձ, կտավատի սերմ, ձմերուկ, սեխ, խաղող)» (**Tournefort P. de, 1717**): Ինչպես հաղորդում է Տուրնեֆորը, Էջմիածնում գերչակ են աճեցրել, որի յուղը օգտագործվել է որպես վառելիք, իսկ կտավատի յուղը կիրառել են սննդի մեջ: Միգուցե դա է պատճառը, եզրակացնում է Տուրնեֆորը, որ Հայաստանում «պլեվրիտը»* (**Մալխասեանց Ս., 1944**) բավական հազվադեպ հիվանդություն է (**Tournefort P. de, 1717**):

Շարունակելով նկարագրությունների շարքը՝ նշվում է, որ վանքերին մոտ տարածված են եղել ծխախոտի դաշտերը, որը ամենաշատն է զվարճացրել

* Հոխա (տաճկերեն՝ okka), ծանրության չափ Տաճկաստանում, հավասար է 400 գրամի (գրեթե 3 ֆունտի): Ռուսահայոց մեջ՝ 3 ֆունտ:

* (Ախտաբ.) Շարփի բորբոքում (Երկու շիճուկային թափանցիկ թաղանթ, որոնք ներսի կողմից պատում են կուրծքը և թոքերը): Պլևրիտը լինում է սուր կամ խրոնիկական:

Տուրնեֆորին. «Ծիծաղելի կլիներ բուսաբանին հարց տալ, թե արդյոք այս մշակաբույսը աճեցրե՞լ են դրախտում» (**Tournefort P. de, 1717**): Ինչ վերաբերում է ձմերուկին, Տուրնեֆորը գրում է. «Ամբողջ Արևելքում չկա դրանցից ավելի լավը, քան երեք եկեղեցիներում և դրանց շրջակայքում: Հայերը անվանում են melon d'eau (ձմերուկ) carpus-om, նրանք այս բառը փոխառել են հույներից, որը նրանք օգտագործել են բոլոր պտուղները անվանելու համար, carpus այս իմաստով նշանակում է գերազանց պտուղ» (**Tournefort P. de, 1717**):

Տուրնեֆորը, այցելելով Երևան և Էջմիածին, համոզվել է այս մրգից օգոստոս ամսին, և եթե նա այստեղ այցելեր հուլիսին՝ ծիրանի հասունացման ժամանակ, ապա անկասկած կգովաբաներ նաև այս միրգը, ինչպես դա արել է իր հայրենակից ու ժամանակակից՝ քարոզիչ Ժակ Վիլլոտը. «Այստեղ աճած մրգերից, հատկապես ծիրանից (լատիներեն անվանումն է malum Armeniacum (հայկական պտուղ), Հայաստանից բացի ուրիշ ոչ մի տեղ չկա ծիրան այդքան համով ու այսքան քանակով» (**Villotte J., 1730**):

Քանաքեռցիին անչափ կարևոր տեղեկություններ է հաղորդում դաշտավարության մասին: Նա նշում է, որ հայերը մշակել են բրինձ, ցորեն, կորեկ, գարի, որից էլ հաց էին թխում: Խոսելով Ամիրգունա խանի մասին՝ գրում է. «...բազում հաց եփեալ, և բառն այրձիոց, և առեալ գնայր, շրջելոյ անդաստանսն, և բաժանէր զհաց՝ որք վաստակ էին յանդս» (**Քանաքեռցի Զ., հ.1, 1870**): Պատմագիրը նկարագրում է երկրագործության մեջ իրականացվող կալսելու եղանակները:

«Պատմութիուն և վարք Մխիթար եպիսկոպոսին» խորագրի ներքո պատմագիրը, բերելով տեր Մխիթարի և մելիք Փարսադանի զրուցը, գրում է. «Յաւուրմիում՝ լծեալ զերիս լուծս եզանց՝ և ծեծէր զորայն ի կալն» (**Քանաքեռցի Զ., հ.1, 1870**): Փարսադանը, զգալով մոտալուտ անձրևը, մարդ է ուղարկում և պահանջում եզները՝ իր օրանը կալսելու համար, սակայն տեր Մխիթարը հրաժարվում է տալ, ասելով. «Ահա տեսանեմք՝ զի կասեմ, զի գոնեայ ի չորոյ բարձից զկալս. վասնորոյ ոչ տամ զեղինս» (**Քանաքեռցի Զ., հ.1, 1870**): Մելիքը այս իմանալով, բարկությամբ է լցվում, և ուղարկելով իր ծառաներին, ասում է.

«...գնացեալ բերջիք զեզինսն այնպէս լծեալ կամնասայլին և կամնավարան՝ և ամենայն որ ինչ ի վերայ նորա է» (**Քանաքեոցի Ձ., հ.1, 1870**):

Օրինաչափ կարելի է համարել այն, որ երկրագործական գործիքների (մանգաղ, բահ, գերանդի, բրիչ, կացին), ինչպես նաև վարուցանքի (վար, ցանքս, հունձք, կալսում, ցորենի մաղում), աշխատանքների նկարագրությունները իրենց տեղն են գտել նաև ԺԷ դարի հայկական միջնադարյան մանրանկարներում (**Գևորգյան Ա., 1978**):

Հիշյալ ժամանակաշրջանում Երևանը եղել է այգեգործական խոշոր կենտրոն: Այստեղ եղել են մրգատու ծառերի, այդ թվում՝ խնձորենու, տանձի, սերկևիլի, մեծ խաղողի, այգիներ ու ցորենի ընդարձակ արտեր: Պարսից շահի հրամանով Երևանում ցորենի արտերի վերակացու է նշանակվում Ամիրգունա խանը: Այս պաշտոնը պարսիկները կոչում են հազարչի. «...գոր ինքեանք հազարչի (զգուշացուցիչ կամ հսկող) ասեն» (**Քանաքեոցի Ձ., հ.1, 1870**):

Երևանի՝ որպես այգեգործական խոշոր բնակավայր լինելու մասին է վկայում նաև նշանավոր հայագետ Ղևոնդ Ալիշանը: Ըստ նրա՝ Երևանում աճեցրել են պատվական պտուղներ, ինչպիսիք են. «Սեխն և ազնուագոյնն ՚ի տեսական Տուղմա կոչեցեալ ըստ Պարսից, Սերկելիլն, Ծիրանն՝ որոյ չիրն թանկագին է յոյժ» (**Ալիշան Ղ., 1890**): Ալիշանի մեկ այլ վկայությամբ Երևանում եղել է նաև ծիրանի թաղ. «Մասն մի Կոնդ թաղի՝ կոչէր և ցարդ լսի յոմանց՝ Ծիրանի Թաղ» (**Ալիշան Ղ., 1890**): Աշտարակում աճող դեղձի և ծիրանի մասին Ալիշանը գրում է. «...՚ի սահմանս Աշտարակայ և ՚ի ձորն Քասաղայ, զատ ՚ի պտղաբերաց, գովելով մանաւանդ զծիրանն և զդեղձ» (**Ալիշան Ղ., 1890**):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զաքարիա Քանաքեոցին ԺԷ դ. սկանավոր պատմագիրներից մեկն է: Նրա եռահատոր երկը անգնահատելի սկզբնաղբյուր է հայ պատմագրական մտքի զարգացման ասպարեզում: Պատմագիրը սկանատես-վկայի ճշգրտությամբ գրառել է արժեքավոր տեղեկություններ հայ ժողովրդի պատմության, տնտեսության ամենատարբեր ոլորտների, այդ թվում երկրագործության, այգեգործության, պտղաբուծության վերաբերյալ: «Պատմագրութիւն»-ը հետաքրքիր

վկայություններ է հաղորդում երկրագործության մեջ կիրառվող աշխատանքային գործիքների, ինչպես նաև Կոտայք և Արագածոտն գավառների արտադրական կառույցների մասին: Քանաքեռցու «Պատմագրություն» երկի առանցքը՝ հայ աշխատավոր, կոռի տակ կքած հայ գյուղացին է: Վերջինս, գտնվելով պարսկական տիրապետության ներքո, ենթարկվում էր խաների կամայականություններին, ապօրինի հարստահարումներին ու ծանր հարկային քաղաքականությանը:

Պատմագիրն անդրադարձել է նաև պարսիկ խաների կողմից տնտեսության զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացմանը, օրինակ՝ ջրանցքների նորագմանը: Անշուշտ, այդ նախաձեռնությունները հայ ժողովրդի հանդեպ տաժած հոգատար վերաբերմունքից չէ որ բխում էին: Այդպիսի քաղաքականությունը հետապնդել է տնտեսական ու անձնական շահեր: Դրանով պարսիկ ղեկավարները փորձել են լավացնել իրենց հարկատու բնակավայրերի տնտեսական վիճակը, որը կնպաստեր հարկերի ավելացմանը: «Պատմագրություն» մեջ տեղ գտած պատմագագադրական կարևոր արժեք ունեցող վկայությունները արժանահավատ սկզբնաղբյուր են հանդիսանում ուշ միջնադարի տնտեսության ուսումնասիրության համար:

Թեև հնարավոր չէ միայն պատմական սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունների հիման վրա համապարփակ ձևով վերակազմել երկրագործական մշակույթի ազգագրական նկարագիրը, սակայն դրանք անգնահատելի են ուսումնասիրվող ժամանակահատվածի տնտեսության վերաբերյալ ամփոփ պատկերացում կազմելու հարցում: Պատմական տվյալները միջնադարյան և ուշ միջնադարյան որևէ երևույթի կամ որոշակի կառույցի մասին նախնական տեղեկություն են տալիս դրա օգտագործման ու նշանակության վերաբերյալ, որը առավել խորքային հետազոտության համար անգնահատելի տվյալ է: Հետազոտության խնդիրն այս դեպքում պատմագրի հայտնած տեղեկության հետևից գնալն է, որը բխում է պատմագետի բուն աշխատանքից, այն է՝ հետազոտել: Այսինքն՝ գործառնական է դառնում սկզբնաղբյուրի հետքի վրա գնալու սկզբունքը (Ստեփանյան Ա., 2014):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալիշան Ղ. (1890)**, Այրարատ, Վենետիկ, Ս. Ղազար:
2. **Աճառեան Հ. (1926)**, Հայերէն արմատական բառարան, հատ. 2, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
3. **Առաքելյան Բ. (1964)**, Խաղողի վերամշակումը Միջնադարյան Հայաստանում, Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հատ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
4. **Բդոյան Վ. (1972)**, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, «Հայաստան» հրատ.:
5. **Բեգլարյան Հ. (2014)**, Երկրագործական մթերքների վերամշակումը միջնադարյան Հայաստանում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
6. **Գևորգյան Ա. (1978)**, Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
7. **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (1969)**, հատ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
8. **Հայրապետյան Ա. (2011)**, Օտար բառերի բառարան, Երևան, «Հեղինակային հրատարակություն»:
9. **Մալխասեանց Ս. (1944)**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 3, Երևան, ՀՍՍՌ Պետական հրատարակչություն:
10. **Շահագիզ Ե. (2003)**, Հին Երևանը, Երևան, «Մուլնի» հրատ.:
11. **Ստեփանյան Ա. (2014)**, Պատմության հետազոտություններ: Գործք, գրույթ, իմաստ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ:
12. **Քանաքեռցի Զ. (1870)**, Պատմագրություն, հատ. 1, Վաղարշապատ, Ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:
13. **Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг. (1902)**, пер. Д. П. Косовича, Тифлис, Типография Канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе.

14. **Tournefort P. de. (1717)**, Relation d'un voyage du Levant, fait par ordre du roy, t. 3, Lyon, Chez Anisson et Posuel.
15. **Villotte J. (1730)**, Voyages d'un missionnaire de la compagnie de Jesus, Paris, Chez Jacques Vincent.

REFERENCES

1. **Alishan Gh. (1890)**, Ayrarat /Ayrarat/, Venetik, S. Ghazar.
2. **Achaean H. (1926)**, Hayeren armatakan bararan /Armenian Etymological Dictionary/, Vol. 2., Yerevan University Publishing House.
3. **Arakelyan B. (1964)**, Khagoghi veramshakume Midznadaryan Hayastanum /Grape Processing in Medieval Armenia/, Materials on the History of Agriculture and the Peasantry of Armenia, Vol. 1. Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
4. **Bdoyan V. (1972)**, Yerkragsortsakan mshakuyte Hayastanum /Agricultural Culture in Armenia/, Yerevan, "Hayastan" Publishing House.
5. **Beglaryan H. (2014)**, Yerkragsortsakan mterqneri veramshakume midznadaryan Hayastanum /Processing of Agricultural Products in Medieval Armenia/, Yerevan, NAS RA "Gitutyun" Publishing House.
6. **Gevorgyan A. (1978)**, Arhestnarn u kentsaghe haykakan manrankarnerum /Crafts and Everyday Life in Armenian Miniatures/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
7. **Zhamanakakits hayots lezvi batsatrakan bararan (1969)**, /Explanatory Dictionary of Modern Armenian Language/, Vol. 3., Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
8. **Hayrapetyan A. (2011)**, Otat bareri bararan /Dictionary of Foreign Words/, Yerevan, Author's edition.
9. **Malkhasieants S. (1944)**, Hayeren batsatrakan bararan /Armenian Explanatory Dictionary/, vol. 3, Yerevan, Armenian SSR State Publishing House.

10. **Shahaziz E. (2003)**, Hin Yrevane, / Old Yerevan/, Yerevan, “Mughni” Publishing House.
11. **Stepanyan A. (2014)**, Patmutyan hetagitse. Gortsk, gruyt, imast /The Trajectory of History: Deed, Writing, Meaning/, Yerevan, “Noravank” Scientific-Educational Foundation.
12. **Khanakertsi Z. (1870)**, Patmagrutium /Chronicle/, Vol. 1, Vagharshapat, Printing House of the Holy See of Etchmiadzin.
13. **Chardin's Journey through Transcaucasia in 1672–1673 (1902)**, translated by D. P. Kosovich, Tiflis, Printing House of the Office of the Chief Administrator of the Civil Administration in the Caucasus.
14. **Tournefort P. de. (1717)**, Relation of a Voyage to the Levant, Undertaken by Order of the King, Vol. 3, Lyon, Chez Anisson et Posuel.
15. **Villotte J. (1730)**, Voyages of a Missionary of the Society of Jesus, Paris, Chez Jacques Vincent

Кристине Папикян, Рафик Габриелян

Описание экономики на страницах «Историографии» Закарии Канакерци

в контексте средневековой армянской культуры

Заклучение

***Ключевые слова и выражения:** Закария Канакерци, историография, первоисточник, позднее Средневековье, земледелие, садоводство, ирригационная система, строительство каналов.*

«Хроника» – труд знаменитого историка XVII в. Закарии Канакерци, разделен на три части. В нем он изложил историю Армении, начиная от царства Аршакидов и установления династии Сасанидов вплоть до 1699 г. Историк родился в 1627 г. в селе Канакер Котайкской области и был настоятелем монастыря Ованнаванк в Арагацотнской области. Он умер в Ованнаванке в 1699 г. Его труд в основном

посвящен изучению Арагацотна и Котайка, в частности ключевым отраслям экономики позднесредневековой Армении: возделывание полей и другие подотрасли сельского хозяйства (земледелие, плодоводство, садоводство). Он пишет также о производственных строениях, о связанных с ними, и дает детальное описание земледельческих орудий. Приводимые им сведения представляют собой ценные историко-культурные первоисточники. В своей работе он опирался на труды предыдущих летописцев, а также на эпиграфические надписи, высеченные на памятниках. Будучи непосредственным свидетелем описываемых событий, Канакерци передает достоверную информацию об исторических реалиях и экономической жизни армянского народа. Особое внимание он уделяет положению крестьян, которые, находясь под персидским гнетом, страдали от тирании ханов, произвола и тяжелого налогового бремени. Историк также коснулся вопроса осуществления хозяйственных работ персидскими ханами, которые преследовали политические и личные интересы. Для обогащения персидские ханы строили каналы на территориях Котайка и Арагацотна для улучшения ирригационной системы, что могло способствовать их обогащению.

«Хроника» Закарии Канакерци является ценным источником для изучения исторической эпохи, в которой жил автор, а также политической, социальной и экономической жизни Армении в позднем Средневековье. Этнографические сведения, содержащиеся в труде, служат важной основой для освещения различных аспектов повседневной и хозяйственной жизни армянского народа. В отличие от историков раннего и развитого Средневековья, сосредоточенных на деятельности светских и духовных элит, армянские авторы XVII в. уделяют основное внимание жизни простого народа. Особое значение в этом контексте имеет «Хроника» Закарии Канакерци, где в центре повествования находятся земледелец, ремесленник, строитель — представители трудового слоя. Вместе с другими авторами позднего Средневековья, такими как Аракел Даврижеци, Закария Агулеци и Григор Даранахци, он вносит важный вклад в освещение различных сфер жизни крестьянства. Изучение этого аспекта делает тему статьи особенно актуальной.

Kristine Papikyan, RAfik Gabrielyan

Description of the Economy in the Pages of "Historiography" By Zakaria Kanakertsi in
Context of Medieval Armenian Culture

Conclusion

Key words and expressions: *Zakaria Kanakertsi, historiography, primary source, Late Middle Ages, agriculture, horticulture, irrigation systems, canal engineering.*

“The Chronicle”, written by the renowned 17th-century Armenian historian Zakaria Kanakertsi, is divided into three parts. It presents a historical account of Armenia from the Arshakid Kingdom and the rise of the Sassanid dynasty up to the year 1699. Zakaria Kanakertsi was born in 1627 in the village of Kanaker in the Kotayk region. He served as the abbot of the Hovhannavank Monastery in the Aragatsotn region and died there in 1699. His chronicle primarily focuses on the regions of Aragatsotn and Kotayk, highlighting the main branches of the late medieval Armenian economy, particularly agriculture — field cultivation as well as related sub-branches such as farming, fruit growing, and gardening. The information he provides serves as a valuable historical and cultural primary source. Kanakertsi based his work on the writings of earlier chroniclers and epigraphic inscriptions carved on various monuments. As a direct witness to many of the events he describes, his accounts are considered credible and accurate. He places special emphasis on the condition of the Armenian peasantry, who, under Persian domination, endured severe oppression, including the tyranny of local khans, unlawful exploitation, and a heavy tax burden. Additionally, Kanakertsi addresses the economic policies carried out by the Persian khans, driven by both political motives and personal interests. In pursuit of wealth, these khans constructed irrigation canals in the territories of Kotayk and Aragatsotn, aiming to boost agricultural productivity and, ultimately, their own profits.

“The Chronicle” of Zakaria Kanakertsi is a valuable source for the study of the historical period in which the author lived, as well as the political, social, and economic life of Armenia during the late Middle Ages. The ethnographic details contained in the work provide a crucial foundation for understanding various aspects of the daily life and

economic activities of the Armenian people.

Unlike historians of the early and high Middle Ages, who primarily focused on secular and religious elites, 17th-century Armenian authors shifted their attention to the lives of ordinary people. Particularly noteworthy in this regard is “The Chronicle” of Zakaria Kanakertsi, in which the narrative centers on the farmer, the artisan, and the builder — representatives of the working class. Alongside other late medieval authors such as Arakel Davrizhetsi, Zakaria Aguletsi, and Grigor Daranakhtsi, Kanakertsi made a significant contribution to documenting various aspects of peasant life. The study of this aspect makes the topic of the article particularly relevant.

Քրիստինե Պապիկյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ ազգագրական նյութի ուսումնասիրությունը ու չմիջնադարյան պատմագիրների երկերում (Զաքարիա Քանաքեցի, Զաքարիա Ագուլեցի, Առաքել Դավրիժեցի): Հեղինակ է 6 գիտական հոդվածի: ORCID-0009-0007-4815-5940, papikyanqristine8@gmail.com

Ռաֆիկ Գաբրիելյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող, հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց տնտեսական մշակույթ, հայոց դարավանդային երկրագործություն: Հեղինակ է 12 հոդվածի: ORCID: 0009-0005-5965-2614, rafik.gabrielyan.iae@gmail.com

Кристине Папикян – Младший научный сотрудник Института археологии и этнографии НАН РА, соискатель. Научные интересы: Изучение этнографического материала в трудах армянских-историков позднего Средневековья (Закария Канакерци, Закария Агулеци, Аракел Даврижеци). Автор 6 научных статей. ORCID-0009-0007-4815-5940, papikyanqristine8@gmail.com

Рафик Габриелян – Институт археологии и этнографии НАН РА, младший научный сотрудник, соискатель. Научные интересы: хозяйственная культура армян,

террасное земледелие армян. Автор 12 статьи. ORCID: 0009-0005-5965-2614, rafik.gabrielyan.iae@gmail.com

Kristine Papikyan - Junior Researcher at the Department of Ethnography of the Institute of Archaeology and Ethnography of the Armenian's NAS RA “National Academy of Sciences”. Reserch Interests. Junior Researcher, Applicant. Scientific interests: The study of ethnographic material in the works of late medieval-Armenian historians, including Zakaria Kanakertsi, Zakaria Aguletsi, and Arakel Davrizhetsi. ORCID-0009-0007-4815-5940, papikyanqristine8@gmail.com

RAFik Gabrielyan – Institute of Archaeology and Ethnography of NAS RA “National Academy of Sciences”, Junior Researcher, Applicant. Scientific interests: Economic Culture of the Armenians. Auther 12 article. ORCID: 0009-0005-5965-2614, rafik.gabrielyan.iae@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 08.07.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 26.07.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.